

ԲԱԺԱՆՈՐՊ ԱԳՐՈՒԹԻՒՆ
 ուղարկող հավատարմ
 Տարեկան 10 ձր.
 Վեցամսեայ 5 »
 Իրատեսակի հավատարմ Տարեկան 12 »
 Վեցամսեայ 6 »
 Ամերիկայի հավատարմ
 Տարեկան 2.50 ֆր.
 Վեցամսեայ 1.25 »
 ԿԱՆԻՍԻՎ ՎՃԱՐԵԼԻ
 —(—
 Իրատեսակի սոդր 20 սան-
 րիս ե. երեքին առե ի սն-
 ցաւնէրու հավատար 20 ՕԹ
 զեղջ կըլայ :

ՇԱՐՋՈՒՄ

Նախկին և նորալ գրիկ
 Խմբագրութեան հասցիքն
 —
 Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна.
 Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐՔԻ ԵՒ ՇԱՐՋՈՒ ՕՐԵՐԸ

Դրուքիւնիս ևս չեն տրուիր

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ՊԱՏԱՆԱՆԱՏՈՒ 3. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

ՊԱՅՏՈՆԱԿԱՆ ԿԵՂԾԻՔՆԵՐ

ՄԱՅԻՍ 6/18

Այսօր բացուում է Լաճէյի «Խաղաղութեան Վեհաժողովը» :
 «Զինաթափի ժողովը» էր անուանը, այժմ պաշտօնապէս միջոցառել են «Խաղաղութեան ժողովը» անունով :
 Դա՞նքն ծիծաղ...
 Ո՞վ է այդ ժողովի գաղափարը յղացողը— ուսական Յարը :
 Մէկ ձեռքով կոչ է անում նիկողայոս Բ. ը բոլոր քաղաքակիրթ ազգերին գումարել Լաճէյ, սպանիչ զէնքերի թիւը քչացնելու, համաշխարհային խաղաղութեան համար մտածելու, իսկ միւս ձեռքով հրաման է գրում ճնշել, սարկացնել ֆրանկախոսներին նման մաքուր, աշխատասէր ու լուսաւոր մի ժողովուրդ :
 Բերանի մի անկիւնով նա կոչ է անում տառապող մարդկութեան վշտերը թեթեւացնելու համար, իսկ միւս անկիւնով սիրաբանում ու գաւեր է լարում բռնակալութեան ստոր գործիք Դալիցիի հետ խեղճ հայերի բոլոր հիմնարկութիւնների դէմ...
 Սա պարզ ապացոյց է պաշտօնական կեղծիքի...
 Խաղաղութեան Վեհաժողովն այսօր բացուում է :
 Ո՞վ են նրա ամենաազգայնիկ անդամները :
 Յարի ներկայացուցիչն է, Պ. Յուալը, Ֆինլանտիային դժբաղդացնելու, նրան դէպի ապստամբութեան ու արեան ճանապարհը մղելու աշխատող Լաւազարութեան մի հաւատարիմ սարուկը :
 Միւսն է Գերմանիայի ախրահրաչակ վեհապետի հոչակաւոր ներկայացուցիչը՝ բարձր ճակատագիր, Միւնխենի համալսարանի իրաւաբանութեան պրոֆէսորը :
 Ահա մի մարդ, որ մի քիչ առաջ անմտութիւն, ցնորարանութիւն համարեց խաղաղութեան գաղափարը. մի խոշոր հատոր

հրատարակեց, որով ցոյց էր առնու, թէ խաղաղութիւնն անհնարին է և կառավարութիւնների կամքից կախած չէ...
 Կոչ էր անում Գերման ազգին միջա չէն ի ձեռքին պատրաստ լինել կայսեր և հայրենիքի երեւակայական թշնամիների դէմ :
 Իսկ այսօր նոյն մարդը համամարդկային խաղաղութեան ձգտող ժողովի անդամ է նշանակուել :
 Ահա, ընթերցող, դառն ծաղրը, տհա համաշխարհային լպիրշ կատակերգութիւնը :
 Պետութիւնները բազմաթիւ գաղափարներով անհիմն առաջ քշելու և դրա համար դիմում են մի գիմակի :
 Իսկ այդ գիմակն այսօր միջազգային խաղաղութեան սուրբ ու մաքուր անունն է...
 Ժողովն այսօր բացուում է և բոլոր քաղաքակիրթ պետութիւնների ներկայացուցիչների շարքում նստած են լինելու երեք անձ եւս...
 Քննեցէք նրանց զգեստները, նրանց սրերը, նրանց շքանշանները :
 Նրանց ֆէսերը կարմիր են, արեան գոյն ունին :
 Լաւ քննեցէք.— նրանց զգեստներն ու շքանշանները, նրանց գրպանի դրամն ու ստացած թղթերը եւս արիւնից են շինուած :
 Մէկի ունեցածը Իւսկիւրի, Մանաթըրի, ամբողջ Մակեդոնիաի նահատակների արիւնն է :
 Միւսինը հայի արեան քարայած մասերից է կազմուած, հայ երկրի խորքերից բերած...
 Երրորդինը Պօլսի զոհերի կենսական հիւթերից է բաղկացած...
 Նրանց բոլորի ձեռքերի վրայ արեան թարմ հետքեր կան. ազատութեան ու խաղաղութեան ձգտող ժողովը գնդերի արեան հետքեր...
 Նրանք իրենց Սուլթանով միասին ոտի տակ աւին, աշխատեցին ու աշխատում են ճզմել խաղաղ ու ազատ կեանք վարելու ձգտող բոլոր անհատներին, բոլոր հասարակութիւններին, և այսօր գնացել են խաղաղութեան վեհաժողովին մէջ...
 Սա կեղծիքի, ստի ու անամօթ խաբարայութեան կատարելութիւնն է :
 Մի անգամ էլ պաշտօնական կեղծիքը մերկայաբանող երեւում է Լաճէյի ներկայ ժողովով :
 ԳԱՍՊԱՐ

ՄԱՍՈՒԼԻ ԶՈՒՐՁԸ

«ԹՈՒԹՈՎՄՈՒՆԻՔ» Մ. Զ. 32 էջ
 ՎԱՌՆԱ
 Բանաստեղծներ շատ ունինք. մեր քաղաքական ու պարբերական թերթերը շարունակ բանաստեղծական էջեր կը բերեն մեզի. բայց այդ առատութեան մէջ շատ դժուար է հանդիպել ճիշդ բանաստեղծական գրութեան, յաշտուած կտորի մը, որ կարենայ արձագանգ գտնել ընթերցողին մէջ :
 Եւ յաջող զանի, սգեւորել և իր ետեւէն քաշել տանիլ :
 Մեծ մասամբ անհամ, անտուր բաներ են անոնք. առաջին փորձեր, խակ պտուղներ որ ուտողին ակեանքերը կառնեն :
 Մէկը հայրենիքը կեցզէ կեղծ, արուեստակեալ ձեւերով. ուրիշ մը սէրը՝ հինցած բացատրութիւններով. մէկ ուրիշն ալ տառապանքը՝ երախայտական միամտութիւնով, և ստոր համար է որ մեր մէջ շատ չեն կարգացուիր բանաստեղծական սեպուած գրութեանքը, և սկսնակները քանի մը փորձեր են եւրը, իրենց անյաջողութեան վրայ ապահովուած՝ վար կը դնեն գրիչնին :
 Այսօր մեր առջեւ է Մ. Զ. ի գրական նախախարիքը. «Թոթովմունք»ը :
 Թոթովմունքում 32 փոքրագիր էջերու մէջ, 31 հատ պառակտած վերնագիրներ, «Մայրը, Ստուերը, Մուխը, Վտակը, Լճակը, Վարդը, Լուսնակը» և այլն, իրարու ետեւէ կուգան կանցնին այլանդակ ճոճումներով. ու երբ քաջութիւնը կուեննաս ընթերցումը շարունակելու մինչեւ վերջին

երգին վերջին տողը, ճնշող բռն էր ազատուած ըլլալու գոհունակութիւնը կը զգաս :
 Այս 31 «Թոթովմունք»ում մէջ չեն գտնու հատ մը, ուր քիչ մը մշակուած երեւակայութիւն, վառ զգացում, տաք շունչ և կամ նոր մտածում մը կենայ :
 Գծուած պատկերները մանկական գծագրութիւններու կը նմանին :
 Ահա քանի մը օրինակ :
 Երեկոյ մէր եւ հորիզոն վարդաւառ, Մեղի լապտեր բրած լուսին զայկահար եւ շքնչելով անուշ զեփուր կենսատու (էջ 19)
 Անտան օր մէր այն, յուշիկ ու հեղիկ Գուրբը կ'անձրեւէր եւ սուրբը հովիկ : (էջ 21)
 Ինչպէս փայլիս դու լուսնակ... Ժըպախս եթէ արտասուես. Հովիկ սուրբայ շարունակ Երեխայի կեանքի պէս : (էջ 31)
 Եւ այսպէս շարունակ լուսինը կը խաղայ, զեփուրը կը շնչէ և աստղերը կը ճեմեն :
 1893-96ի գրութեան տողերուն մէջ ի դուր պիտի փնտռես հատ մը որ ազգային գոյն ունենայ :
 Բանաստեղծ կարծես հայութեան տառապանքէն բան մը չէ զգացել. հայրենիքի աւերածէն բան մը չէ տեսել. և կամ իր գրութեանքը թուրք գրութեան թեթեւութեան ծայրատուեր են :
 Միայն երրորդ «Թոթովմունք»ով պանդուխտին կարօտը կերպէ, ան ալ շատ սուսուած կերպով :
 Այսին լայն տեղ տուեր է սակայն իր շարաբաստիկ սիրոյն եւ մաղձոտ երեւակայութեան. և անոնց մէջ սկսնակներ կը տեսնուին իր անցոր ճիգերը Գուրբանուկան ըլլալու :
 Լճակին մէջ :
 Ես սիրեցի քեզ լճակ... Պահէ՛ ծոցդ իմ յիշատակ : Կ'ուզեմ քեզմէ և մի բուն : Պատանք գաղաղ, գերեզման : (էջ 9)
 Աստուպին մէջ :
 Հո՛ւր, շո՛ւնչ սրէք մտած սրբախ Ուր վերքեր կան արիւնայից, Վէրքեր որ միշտ բաց կը մընան Եւ զիս տանին սեւ գերեզման : (էջ 26)
 Եւ այսպէս ուրիշ անյաջող հետեւողութիւններ :

Իրաւ, երբեմն կը հանդիպու
տողի մը որ զգացուած ըլլայ .
բայց ան ալ չուտով ամբողջին
տափակութեանը մէջ կը սփռու-
նի :

Գոնէ լեզուն սահուն ըլլար,
ան ալ կը պակտի . և յանգերու
արուեստակեալ բանի դորձածու-
թիւնները մութ կը ձգեն շատ
պարզ կտորներ :

ԵՐՈՒՍԶ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Փ. Պօլիս, 3 Մայիս

(ՄԵՐ ՄԱՆՆԱԻՈՐ ԹՂԹԱԿՅԵՆ)

Երէկ վերջապէս հոս ալ տեղի
ունեցաւ Լահէյի Վեհաժողովին
առթիւ գումարուելիք ազգային
միթիւնիկը : Որքան խուլ ու ան-
տարբեր մնաց քաղաքիս ունեւոր-
ներու դասակարգը միթիւնիկի մաս-
նախումբին օժանդակելու համար
իրեն եղած ամէն դիմումներուն ,
ամէն կերպ խնդրանքներուն առ-
ջեւ, ու նոյնիսկ, միթիւնիկներ-
կայ չը գտնուելու չափ ստորնա-
ցաւ, այնքան բուն հայ ժողո-
վըրդական դասակարգը, արհես-
տաւորը և պանդուխտը, կին ու
տղայ, առանց որ և է խարու-
թեան, հոն համախմբուեցան չը
փախցնելու համար առիթը՝ ուր
իրենց կարէվէր սրտին բողբի
դառնացած աղաղակներով պիտի
կարողանային աշխարհի խաղա-
զութեան Համաժողովին ուշա-
գրութիւնը հրաւիրել իրենց ան-
տանելի վիճակին վրայ : Եւ ար-
դէն ուրիշ կերպ չէր կրնար ըլ-

լալ . հայկական առաւապանքնե-
րու ազգեցութիւնը իր Լաշիկի
վրայ կրող դասակարգը խեղճ
արհեստաւորն է, մշակը կամ
գործաւորը . ունեւորը միշտ քիչ
կամ շատ ստորին միջոցներով
յաջողած է իրմէ հեռու պահել
թրքական բարբարոսութեանց
առաւապանքները :

Միթիւնիկի մասնախումբին շա-
բաթ իրիկուն ցրուած հրաւիրա-
գրին համաձայն, ժողովուրդը
կիրակի առաւօտ ժամը 10ին հա-
ւաքուեցաւ Եկեղեցւոյն բակը :
Տ. Յ. Կիւզէլեան, մասնախումբին
կարգադրութեան համեմատ մի-
թիւնիկը պիտի բանտր, բայց գի-
շերը յանկարծ հիւանդացած ըլ-
լալով, մասնախումբին հաւանու-
թեամբ Տօքթ. Փափաղեան մի-
թիւնիկին նախագահեց . իսկ քար-
տուղարի պաշտօնը կատարեց
Պատ. Հայկ Եփրատեան : Նախա-
դահը միթիւնիկը բանտրէ յետոյ .
խօսքը տուաւ Պատ. Եփրատեանի,
որ մասնախումբին կողմէ կանխաւ
հրաւիրուած էր առեւտրութեան
Պատ. Եփրատեան ամէնէն սրտա-
ռուչ շեշտերով, ամէնէն զգաց-
ուած և յուզիչ նկարագրութիւն-
ներով պարզեց հայերու ներ-
կայ թշուառ կացութիւնը և ա-
նոնց կրտսէ վայրագութեանց
աղբխարչ պատկերը, որ շատ
արցունքներ խլած է արդէն մեր
սրտէն, որ շատ յուսահատ հա-
ւաքներ արձակել տուած է մեր
սգաւոր սրտին խուլ աչքերէն, և
որ ծնունդ տուած է այն հերոս-
ներուն, որոնք կանքի ամէն
վայելք ուրանալով կուռի դաշ-

տին վրայ նուիրագործած են ի-
րենց օրինակելի գոյութիւնը :
Պատ. Եփրատեան յետոյ պար-
զեց միթիւնիկին նպատակը և վեր-
ջացուց խօսքը յորդորելով ժո-
ղովուրդը, որ միշտ մտնայ իր
ներքին վէճերը և միացած ու-
ժերով դորձէ, երբ խնդիրը ար-
տաքին թշնամիներու գէժ կըու-
ուելու վրայ է : Յետոյ, Տ. Կիւ-
զէլեանի կողմէ Տ. Ե. Մայրօբան
դրաւոր առեւտրութիւն մը ը-
րաւ, որմէ ետքը նախագահը
հրաւիրեց Տ. Ա. Տէմիրճիպաշեանը
հեռագրին պատճէնը կարգաւ և
միթիւնիկին հաւանութեան են-
թարկել : Միթիւնիկը որ 1000ի մօտ
անձերէ կը բաղկանար, սրտեց
միաձայնութեամբ իր կողմէ իբր
պատգամաւոր ընտրել Տ. Մինաս
Չերալ, ինչպէս նաեւ անմիջա-
պէս հանգանակութիւն մը բանալ,
որմէ, միայն տասը վայրկեանի
մէջ, 168 Քրտնքի հատոյթ մը
զոյացաւ : Կիները, վոքրիկ տը-
ղաքներն անգամ մասնակցեցան
այդ հանգանակութեան : Տեղացի
աղբաւ պառաւ կին մը իր բոլոր
ունեցածը, քսան սանթիմ, զոր
այդ օր պանիր գնելու համար
պահած է եղեր, պիտիկին մէջ
ձեռք արցունքոտ աչքերով : Ա-
մէնքս ալ մեկնեցանք խորապէս
զգածուած, միթիւնիկներով մեր
աւշեւ բացուած յոյսի նոր դուռ-
ներէն : Ժողովը դեռն այս համա-
խմբուած ապացուց, թէ հայը չէ
չլատած, չէ յուսահատած անց-
եալին հակամարդկային կոտորա-
ծին հետեւանքով :
— Նոյն օրը կէս օրէն յետոյ,

վարժարանին սրահին մէջ տեղի
ունեցաւ Վանի սովածներուն
ի նպատակ վիճակահանութիւնը .
Խեղճ սովածներ, սրտք ամիս-
ներէ հետէ կը սպասեն Փ. Պօլիսի
վիճակահանութեան կազմակեր-
պիչներուն քննահանգը, պա-
տառ մը հաց գտնելու համար :

Սօֆիս, 29 Ապրիլ

Տեղոյս ազաները իրենց բոլոր
ջանքերը կը թափեն Եկեղեցին
զարգարելու համար : Տ. Թովմատոյ
սաղաւարտ ու վակաս շինելու
տան, հարիւրներով Քրտնքներ
կը հաւաքեն ու կը ծախսեն . կը
չարգարեն Եկեղեցի մը, որուն
այցելուներուն թիւը 10—15ը
չանցնիր, և որուն մէջ նոյնիսկ
մեծ պահքի հինգ շաբաթները
արարողութիւն չըլլար . իսկ
զպորցը երեսի վրայ մնացած է :
Արդեօք մեր ազաները ընդու-
նակ չե՞ն հասկնալու թէ մենք ա-
ւելի մտքով մշակուած նոր սերնդի
մը պէտքը ունինք, քան թէ
զարգարուն Եկեղեցիներու և քա-
հանաներու : Եկեղեցիները զար-
գարելու ցաւը չէ՞ր, որ մեզ խա-
ւարի և տղիաութեան ճիրաննե-
րուն մէջ պահեց մինչեւ օրս, և
մեր տեսակ տեսակ թշնամիները
կրցան մեզ ճշմել ու խեղդել :

Այ. Սօֆիսի ազաները քիչ մըն
ալ հայ մասնակները լուսաւորե-
լուն վրայ պէտք է մտածեն : Ա-
նոնք են, որ ապագային մեզի օգ-
տակար պիտի ըլլան, ոչ թէ շքեղ
զգեստներով քահանաները : Մեր
զպորցին աղաքը օրը հաղիւ եր-
կու ժամ կը զբաղին իրենց դա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ (2)

Ի. ՎԱԶՈՎ

ՊԵԼԻՍԵԼՏԻՆ

(ԻՐԱԿԱՆ ՎԷՊ ՀԱՅՐՈՒԿԻ ՄԸ ԿԵԱՆԲԷ)

Երկուցիան զէժ գապթիւնները,
Անմէտ աղաի առաջնորդութեամբ,
պահուած աւազակները գտնելու
պատրուակով գիւղացուց տունները
խուզարկեցին և տակնուվրայ ը-
րին : Հալածանք մըն էր որ սկսաւ
աղբիկներու և հարսերու դէմ : Չեմ
ուզեր նկարագրել գապթիւններու
ըրած գազանութիւնները : Քանի որ
Սլավչօ Պէրմէլցի էր, ուրեմն և
զիտը պարտաւոր էր անոր կալանա-
ւորները կերակրել և անոնց բոլոր
հաճոյքները կատարել . ի հարկէ ըստ
թրքական օրինաց և սովորու-
թեան . . .

Ամբողջ գիւղը սուգի մէջ համակ-
ուած կը հեծէր : Արգէն ուշ էր, վեր-
ջալոյսը կը մօտենար և գապթիւ-
ններն ալ լողնած էին . ուստի Ան-
մէտ աղան որոշեց այն գիւղը իջե-
լանիլ, մանաւանդ որ աւելի անվը-
տանք էր : Որոշեցին չորպաճի նէտօի
տունը իջեւանիլ . գիւղին մէջ ամէ-
նէն ապահով, քարուկիր և պարբ-
պապատ տունը, սենեակները ամուր
զոներով կը փակուէին : Թէև չորպա-
ճի նէտօ թուրք կառավարութեան

հաւատարիմ և անձնուէր շուներէն
էր, իր եղբայրներու արիւնը ծծող
վաշխատու քրիստոնեայ մը . բայց
և այնպէս զապթիւնները զգու-
շութեան բոլոր միջոցները ձեռք
առին Սլավչօն չը փախցնելու հա-
մար :

Անմէտ աղան և գապթիւնները
ընդարձակ սենեակի մը մէջ տեղա-
ւորուեցան : Սլավչօ վարը մտանիլ
մը մէջ կողպեցին, չը մոռնալով ձեռ-
քերը ամուրկէկ կապելու . գապթիւ
մըն ալ դրան առջեւը պահապան
զրին :

Լուսնկայ, հանդարտ ու պարզ
գիւղէր էր : Երբ ամէնքն ալ սկսան
խոթթալ, Անմէտ աղան կամացուկ
ելաւ իր տեղին, երկու ատրճանակ-
ները և ետնադանը անցուց գոթի-
ին մէջ, առաւ լապսերը և գուրս
ելաւ :

Սանդուխէն վար իջաւ . ոտքովը
հրեց մրափող գապթիւն և մտանին
զուռը բանայով կալանաւորին մօտ
գնաց :

Չապթիւնները կը կարծէին թէ
Անմէտ աղան այս տարածամիտ կեր-
թար աւազակը շարքաքննելու ըստ
իր սովորութեան : Նա հարցաքննու-
թեան ճիւղը լաւ ուսումնասիրած էր
և կը պարծենար իր մասնագէտ
գազանական տանջանքների ստեղծե-
լու . . . մեծ հաճոյք կը պատճառէր
իրեն պուլկար մը տանջանքներով
խոստովանցել :

Այս անգամ Անմէտ աղան առանց
օգնականի գնաց կալանաւորին մօտ

իր նուիրական պաշտօնը կատարե-
լու, տնչուշտ առանձին պատճառ-
ներէ դրողուած :
Սլավչօ մութ նիւղի մէջ պա-
տին կրթնած էր . ձեռքերը ամուր
կապուած էին մէջքին . գլուխը
կարուածի պէս կախ ընկած . մար-
մինն ալ սիւնին էր կապուած, ոչ
կրնար չոքել ոչ ալ շարժում մը
ընել :

Երբ Անմէտ ներս մտաւ, Սլավչօ
սարսեցաւ . աչքերը զարմացմամբ
բանալով նայեցաւ առջեւը . վերջը
նորէն անզգայութեան մէջ ինկաւ .
հասկցաւ թուրքին սարածամ այ-
ցելութեան նպատակը . դարձեալ իր
անշարժ նայուածքը դեմինը ուղղեց :
Պաղ քրտնք մը եկաւ ճակտին,
երբ Անմէտ աղան ետնադանը ձեռքը
մօտենալով գոչեց .
— Լսէ, կեաւուր :

Սլավչօ գլուխը վեր վերցուց և
տնկուեցաւ իր ուժաթափ ու քարտ-
ցած սարերուն վրայ . անոր վիթ-
խարի հասակը միջեւ ձեռքերը կը
հասնէր և երեք թիվ բարձր էր Ան-
մէտ աղային : Սլավչօ կը նմանէր
կապուած խոշոր գազանի մը . սա-
կայն Անմէտ լաւ գիտէր թէ վախ-
նալիք բան մը չուէր : Անմէտ իր
դաժան, ճրպի լոյսին սակ տար-
րինակ փայլ մը տուած, աչքերը կը
սեւեռէր Սլավչօի վրայ, որ միշտ
անտարբեր դեմին կը նայէր :

— Հիմակ ճիշդը պիտի խօսիս .
իրողութիւնը պիտի պատմես, ըսաւ
Անմէտ աղան :

Սլավչօ արձամարհական նայ-
ուածք մը միայն նետեց թուրքին :
— Կը լսես, անիծած շուն, զայ-
րանալով գոչեց Անմէտ . բոցավառ
կրակարանը պատրաստ է :

Այս չարագուշակ արցունքալառ կրա-
կարանը բառերը բաւական էին ա-
մէնէն երկաթեայ կամք ու հաստա-
տուն բնաւորութիւն ունեցող մարդն
իսկ ստակացնել : Սլավչօ իբր աւա-
զակ քաջ տեղեակ էր այս հրէշային
գործիքին : Թէև քրտնքը հեղեղի
պէս այտերէն կը վազէր, սակայն
կը լռէր :

— Մտիկ ըրէ, հրամայեց Անմէտ
աղան :

Սլավչօ աչքերը բացաւ :
— Ըսէ, ո՞ւր թողեցիր վիտինի
գանձը :

— Չեմ գիտեր :

— Ես քեզի դիտցնել կուտամ,
ըսաւ Անմէտ, և ետնադանի բուրձ
կողմովը ուժգին հարուած մը իջե-
ցուց Սլավչօի ալ ձեռքին : Սլավչօ
սաստիկ ցաւէն միտայն աչքերը գո-
ցեց : Անմէտ աղան քանի մը անգամ
կրկնեց իր հարց ու փորձը և սպառ-
նալիքները, բայց ի զուր . Սլավչօ
յամտաբար կը լռէր :

Թուրքը բոլորովին կատաղեցաւ .
որովհետեւ առանց վկայի կուզէր ի-
մանել զատմներուն տեղը, որ հա-
ւանօրէն պատ հետո չէր : Ստիպուած
էր տանջանքներու դիմել : Բայց ան
ատեն օգնականներ կանչելու պէտքը
պիտի ունենար, որոնք ակամայ
վկայ պիտի ըլլային Սլավչօի խոս-
տովանութեան :

սերով . մինչև ապրիլ ամսոյ 25
ընառ դասախօսութիւն չեղաւ :

Եկեղեցիին վրայ աւելորդ ծախ-
քեր ընել և վարժարանը բարձր-
վին երեսի վրայ ձգել անխըղ-
ճութիւն և անարդարութիւն է .
եկեղեցին պաշտամունքի համար
պէտք է մեղի , իսկ վարժարանը
հայ պիտի հասցնէ :

Մենք այնքան պէտք չունինք
քահանաներու որչափ ուսման ու
գիտութեան . այս է որ մեզ պի-
տի մօտեցնէ մայր հայրենիքին
և ասով մենք պիտի ազատինք
ողբաբանութեան խաւարէն : Կախ
վարժարանը—այս և եկեղեցին—
զարդարել այս է ներկայ ժա-
մանակի պահանջը , յարգելի ա-
զաներ :

Ուսումնարանէն դատ ուրիշ կա-
րելոր խնդիր մըն ալ ունինք
հոս : Հայաստան սովատանջ է .
ամէն տեղի ազգայինը իրենց ա-
ռառ նուէրները կը հասցնեն հայ-
րենիքի մէջ անօթի ծարաւ թա-
փառող հայ սրբիկներուն . մենք
ի՞նչ ըրինք ու ի՞նչ կընենք :
Յունվար 1էն ի վեր ընկալագրեր
տպուած են երկու որբեր խնա-
մելու համար . մինչև օրս միայն
13 ընկալագիր բաժնուած է .
Քանի չարած է որ սովածներու
համար նպաստ պիտի ժողվենք .
չը յաջողիր : Պատճառը եկեղե-
ցիին շինութիւնն է . նուազա-
հանգէս պիտի տրուի , սորչում
մը չեն կրնար տալ . եկեղեցին
եռ կը մնայ կըսեն , փայլեցնենք
զայն :

Իսկ մենք կըսենք . եսամոլ ա-
զաներ , նախ անօթիներուն հաց

հասցնենք , ապա դպրոցը հաս-
տատ հիմերու վրայ գնենք , այ-
նուհետեւ ինչ կուզէք ըրէք եկե-
ղեցին . կուզէք յաւիտեանս մէջը
ընակեցնէք :

Ս . Ք .

ՆԱՄՍԿ ԽՍՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Ալեքսանտրիայի ժողովրդական
գրադարան—ընթերցարանի հիմնադիր
մարտիրոսներ ամեններ առաջ մաս-
նաւոր նամակներով զիմում ըրած
լինելով զրէթէ բոլոր հայ հեղինակ-
ներուն , հրատարակչներուն եւ
խմբագիրներուն՝ որպէս զի բարե-
հաճին իրենց երկերով ու հրատա-
րակութիւններով նպաստել նորա-
հաստատ Գրադարան—ընթերցարա-
նին . ներկայիս կուզանք Շարժումի
միջոցով մեր հրատարակչին շնոր-
հակալութիւնները յայտնել հետեւ-
եալ յարգելի անձնաւորութեանց ,
որոնք միայն իրենց նուէրներով
փութացին պատասխանել մեր զի-
մումին :

1. Խմբագրութիւն «Նոր-Դար»ի
մէկ օրինակ յարգելի . 2. Խմբագրու-
թիւն «Տարազ» եւ «Ազգութիւն» մի մի
օրինակ հանդէս . 3. Խմբագրութիւն
«Արարատ»ի մէկ օրինակ հանդէս .
4. Խմբագրութիւն «Անտիպոս»ի մէկ
օրինակ հանդէս . 5. Խմբագրութիւն
«Արմենի»ի մէկ օրինակ ամսա-
թերթ . 6. Խմբագրութիւն «Տիգրիս»ի
մէկ օրինակ շաբաթաթերթ . 7. Խմ-
բէն կախիկ . Ստեփանէ մի մի օրի-
նակ «Խորհրդացու պատմութիւն» եւ
«Տարտիֆ» . 8. Մեծ ժամհարեան
երկու օրինակ Արտիստի երկերը .
9. Պ . Գ . Սոււնուկեանց , երկու օրի-
նակ «Ամուսիններ» , մէկ օրինակ
«Խաթաբալա» . մէկ օրինակ «Պէպօ» ,
մէկ օրինակ «Բանդաճօճ» . 10. Պ .
Ա . Թատուրեան՝ երկու հատոր բա-
նաստեղծութիւններ եւ մէկ օրինակ
«Արձակ Բանաստեղծութիւններ» :

Այս առթիւ գարձեալ կը խնդրենք
այն արգոյ պարունակէն , որոնք
զիս չեն պատասխանած մեր զիմու-
մին , որ հաճին իրենց հրատարա-
կութիւններէն գէթ մի մի օրինակ
զրկել մեզ . սրով մեծապէս նպաստած
պիտի լինին սեղանս բազմաթիւ
հայ գարթակաւորութեան մտաւոր
զարգացման գործին :

Ալեքսանտրիայի ժողովրդական Գրա-
դարան—ընթերցարանի :

Հիմնադիր մասնախումբ

Ալեքսանտրիա , 15 Ապրիլ

Ն Ա Մ Ս Կ Ա Տ Ո Ւ Փ

Մեր յարգոյ բաժանորդներէն
կը խնդրենք որ փութան «Շար-
ժում»ի երկրորդ տարուան բաժ-
նեկները զրկել մեզ , կամ վճա-
րել մեր գործակալներուն : Արդէն
տարւոյն երեք ամիսը անցաւ :
Իրենց բաժնեկները չը վճարող
անձերու թերթերը պիտի ստիպու-
նինք զադրել յենէ :

Նիւ-ԵՕՐԲ . Վ . Մ . — Ք . ձ . ի . թ .
թ . կը զրկենք մայիս 1էն , Ձեր թեր-
թերը 20ի կը բարձրացնենք : Եւրո-
հակալութիւն ձեր ջանքերու համար :
Յաջողութիւն :

ՈՒՅԵՐԵՐԻՍՏՈՒՆ . Մ . Պ . Գ . — Երեք
բաժանորդներուն ալ թերթ կը զըր-
կենք մայիս 1էն , Շարժումի վեցամ-
սեան 1.25 տարու է , ոչ թէ մէկ
տարու : Եւրոհակալութիւն : «Կայ-
ծեր» չունինք : Ձեր հրահանգները կը
գործադրենք : Դրամ զրկել ՄՍԿՆ
«ՓՕՍԹ ՕՅԻՍ ՄԷՆԻ ՕՐՏՏՐ»-ով : Ա-
մերիկայէ եկած բոլոր նամակները կը
բացուին եւ ներփակուած ԹՂԹԱ-
ԴՐԱՄՆԵՐԸ կը ԳՈՂՅՈՒՆ :

ԱԼԵՔՍԱՆՏՐԻԱ . Վ . — Շարժումի
բաժնեկներուն մէջոցը 162 Քր .
հաւաքելով անմիջապէս մեզ զրկե-
ցէք :

—)(—

— Ձիւ ազատ թո՛ղ , քեզի ցու-
ցունեմ տեղը :

— Ա՛հ , չուն կեանքուր , շատ խո-
րամանկ ես եղեր :

Սլաւչօ լոնց :

— Դու զիս այնչափ տխմար կար-
ծեծիր , որ գայլը անասոր թո-
ղում : Անմէտ աղան սարի ինն հաւ է :
Իրօք Անմէտ հին աղու էս էր .
բայց ուրիշ միջոց չէր կրնար գտնել
այդ բաղձալի հարստութիւնը ձեռք
բերելու առանց Սլաւչօի շնորհակա-
նութեան , նա քանի մը վայրկան
ապուշ էր կարած . վերջը աչքերը
կատաղութենէն բոցալոտուեցան եւ
սպառնական կերպով ուղղուեցան
Սլաւչօի :

— Մի՛հալ կի՛նս կրնայ ցուցնել
քեզի այդ տեղը , մէկ կէտիմէկ ըսաւ
Սլաւչօ :

— Կի՛նոյ , մի՛թէ նա գիտէ :

— Ոչ :

— Հապա ինչօ՞ւ կըսես թէ կի՛նոյ
կրնայ :

— Ես անոր պիտի հասկնանմ . նա
քեզի հետ կերթայ եւ կը ցուցնէ :

— Բայց ա՛յս գիշեր :

— Այո , այս գիշեր . կանչեցէք
զանի :

Անմէտ քիչ մը մտածեց եւ կաս-
կածանքով նայեցաւ :

— Ի՞նչու անպատճառ քու կի՛նոյ .
չի՛ս կրնար էրիկ մարդու մը , ուրիշ
գիւղացիի մը հասկցնել . ես կը բե-
րեմ :

— Ձեմ ուղեր :

— Ինչօ՞ւ չես ուղեր :

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Վառնայի Հոգաբարձութիւնը
պաշտօնական նամակով մը մեզ
կը հարգէ թէ Հոգաբարձու-
թիւնը , «Տէր Գէորգ հօր առա-
ջակութեան համեմատ , որո-
շած էր գանձանակի և զանազան
հատոյթներու հարիւրին 25ը և
տուն օրհներքի հատոյթէն 100
Քրանք յատկացնել Տէր Յովակիմ
հօր» : Հետեւապէս , «Տէր Գէորգ
քահանայ Հիւրմիւլեան որոշուած
գումարը ցարդ չը վճարելուն
մէջ ըստ ամենայնի յանցարո-
ք» : «Իրապէս» ալ այս մասին
նորէն գրած է մեզ , բայց Հո-
գաբարձութեան այս նամակէն
յետոյ , հարկ չը մնար զայն
հրատարակել :

— Ի . Փաղարճը կը գրեն
մեզ թէ Տ . Գէորգ Վ . Նալպանտ-
եանի նախագահութեամբ մի-
թիկ մը կազմուած է Լահէյի
Վեհաժողովին գիմում մը ընելու
համար : Սովորական որոշմա-
գիւրը պատրաստուելով , որոշուե-
ցաւ զրկել Վեհաժողովին նախա-
գահին և պետութեանց պատ-
ուիրակներուն : Ձէյթունի սո-
վածներուն համար հանգանակ-
ուած գումարը , 360 Քրանք ոսկի,
զրկուած է Պատրիարքարան :

— Յառաջիկայ մայիս 15ին շա-
բաթ գիշեր , Պատրիարքարանի սրա-
հին մէջ ի նպատակ Վանի սոված-
ներուն պիտի ներկայացուի
«Վասպուրականի Հերոսներ» հայ
յեղափոխական կեանքէ առնուած
թատերախաղը , մէկ քանի երի-
տասարդներու կողմէ , աջակցու-

նորէն , կատաղութեան փրփուրը
բերին , գոչեց .

— Ըսէ :

— Ձեմ գիտեր :

Քանի մը վայրկեան Անմէտ լուռ
ու մուջ մտածեց թէ մ'ը տան-
ջանքէն սկսի :

Յանկարծ Սլաւչօի աչքերը ար-
տասովոր փայլ մը ստացան . քիչ մը
առաջ անասորքեր եւ մահացած գէմ-
քը կենդանացաւ , եւ տանձին վճռո-
ղակաւորութեամբ համարձակօրէն նա-
յեցաւ թուրքին : Թուրքը նկատեց
Սլաւչօի գէմքին փոփոխութիւնը եւ
կարծեց թէ նա , տանջանքէն սար-
սափած , վճռած է պատասխանել . չը
խարուեցաւ ալ :

Սլաւչօ ըսաւ .

— Դրամներուն ուր թաղուած ըլ-
լալը գիտեմ :

— Ուր են . հարցուց Անմէտ ըն-
չաքաղցութեան անկուշտ ծարաւէն
բոցալոտած աչքերը սեւեւեւով :

— Դրամները թաղեցինք այս
կողմերը , մօտիկ տեղ :

— Հա՛ , Պէյի—Մէլի մօտ :

— Այո , մօտերը :

— Բայց նոյնը ըսաւ եւ այն չու-
նը որ առջի գիշեր սատկեցաւ . զուն
աւելի մանրամասնօրէն պատմէ ինծի-
ն .

Սլաւչօ չը պատասխանեց :

— Ըսէ :

— Ի՞նչ :

— Մնացածը . հասկցիր որ զիս
սուտերով չես կրնար խաբել . մար-
մինդ բոլոր բոլոր կընեն :

Սլաւչօ գարձեալ չը պատասխանեց :

— Ինչօ՞ւ կը լսես :

— Ինչպէ՞ս հասկնանմ քեզի , ըսաւ
Սլաւչօ , զու պիտի չը կրնաս գտնել :

Խօսքով չեմ կրնար բացատրել :

— Տեղը ի՞նչպէս կը կոչուի :

— «Կապոյտ գետակ» :

— Ուր է . այդ տեսակ տնուն ես
չեմ լսած :

— Օկոսթա գետին մօտ . մեծ ժայ-
ռի մը վրայ . . .

Անմէտ աղան ինկաւ մտածմանց
մէջ : Դէմքը հոգեկան աստիկ ալե-
կոծում կարտայայտէր . բազորոջ էր
որ գանձին կէտը գողնալու յոչքը իր
միայնակ երեք պիտի չը կրնար
գտնել այս «Կապոյտ գետակ»ը . եւ
ժայռ . . . աւազակին միջին ցուց-
մունքներով : Մաքէն իսկ չէր անց-
ներ աւազակը աղատ թողուլ տեղը
ցուցնելու համար , մանաւանդ այս
կէս գիշերին . . . վաղը աւելի ապա-
հով կրնար ըլլալ : Այսպէսով Ան-
մէտ աղան , ընաւ օգուտ մը պի-
տի չունենար : Գանձին տիրելու
տենչը եւ այս խորհրդածութիւնները
կանցնէին թուրքին անհամբերու-
թիւնը . բազմը գիշերը յաջող գիպ-
ուածով մը պիտի հարստացնէր , իր
ծերութիւնը հանցիտ անցընելու
համար . բայց նա կը վախնար որ
այդ գիշերուան թանկագին ժամերը
պիտի սահէին առանց բան մը յա-
ջողանելու :

Ըստ երեւոյթի Սլաւչօ հասկցաւ
թուրքին թախիծը եւ ըսաւ անոր :

— Դուք վաղը զիս Սօփիա պիտի
տանիք կախելու . վերջին անգամ
կուզեմ կի՛նս տեսնել :

— Եթէ կի՛նոյ չը կանչեմ :

— Ան ատեն ես ալ ուրիշին բան
մը չեմ յայտնել :

— Բայց գիտե՞ս թէ կրակը պատ-
րաստ է :

— Ինծի համար նշանակութիւն
չունի : Ուզածդ ըրէ :

Աքաղաղները երկրորդ անգամ
կանչեցին զուրբ :

— Խորամանկ կեանքուր ես եղեր ,
ըսաւ Անմէտ աղան բարկութիւն ձե-
ւացնելով . շատ լուռ , կը կանչեմ :

Աս ըսելով իսկոյն զուրբ ելաւ .
սանդուկներուն վրայ եղող պահա-
պան զապիթին որ կը խորթար , ոտ-
քովը հրեց եւ ըսաւ անոր .

— Գնա՛ , չուտ մը Սլաւչօի կի՛նը
հոս բեր : Ըսէ որ Սլաւչօ կուզէ
զինքը տեսնել :

— Եթէ չուզե՞ս այս տարածամին
զալ , հարցուց զապիթին :

— Մաղբէն քաշելով բռնու-
թեամբ հոս կը բերես այդ քածը ,
անպիտան :

Իր պետին հլու զապիթին , վե-
րաբիւն վրան տանելով , զուրբ ե-
լաւ նէսօ չօրպոստի գոնէն . այս
ալմուկին վրայ թաղին չունիքը
սկսան հաջել ու իրար անցնիլ . բայց
նորէն սովն բան խոր լուծեան
մէջ թաղուեցաւ . . .

Թատրոլ . Պ . Միւրիման

թեամբ կարգադիր մասնախումբի մը :

— Վանի ամերիկեան որբանոցէն տասը պատանիներ իրենց զիւրերը զրկուած են՝ ամէն մէկը զգեստով, անկողինով, զոյգ մը եղով, հինգնական ոսկիով, սերմնացու և ուտելու ցորենով, որպէս զի նորէն տուն տեղ ըլլան : Մը. Բէյնօլտսի այս գաղափարը մեծ գոհունակութիւն առթած է ամէն կողմ :

— Կ. Պօլէն կը գրին մեզ թէ, երբ Ռոտտօթօի առաջնորդ Այվազեան վարդապետ հոն հասաւ, մաքսատան մէջ խուզարկութեան պահուն վրայէն գտնուեցաւ Վանի հանգանակութեան մէկ թուղթը : Վարդապետը, որ էջմիածին կերթայ եպիսկոպոս ըլլալու համար, «առօք փառօք» ոտականութեան դուռը տարուեցաւ : Բայց յետոյ պարտաւարանի դիմումին վրայ ազատ արձակուեցաւ :

— Ունճեան Աբիկ, Թիմարէթ խանի հասոյթներէն գումար մը աւելցնելով, փառաւոր շէնք մը շինած է ազգին համար Ղալաթի Պանք Օթօմանի գէմ, և թղթատարական վարչութիւնը վարձած է զայն տարեկան 550 ոսկի : Երկար ժամանակէ հետէ գանդատ կար թէ Ունճեան էֆ. սովածներու համար հանգանակած դրամով կալուածներ գնած էր, և ազգին հաշիւ չէր տար : Թրքամոլ Ունճեան էֆ. ուղած է ցոյց մը ընել բողոքողներուն դէմ :

— Պուրկազէն «Դիտող» կը գրէ թէ տեղւոյն «խաչագող» և «խարբբայ» դասատուին վրայ յարձակում եղած է չորս վանեցիներու կողմէ, որոնք փայտի հարուածներ իջեցուցած են անոր... ապականած մարմինին վրայ : Դասատուին աղաղակներուն վրայ ոտականները ձերբակալած են յարձակողները :

— Ս. Փրկչի ազգային որբանոցին մէջ որբերը կօշկակարութեամբ կը զբաղին. սկսած են մեծաքանակ կօշիկ պատրաստել : Մօտերս գերձակութեան ճիւղն ալ պիտի մտցուի :

— Փեթերսպուրկի հայ եկեղեցական-ճխական ժողովի պակասած երկու անդամներուն ընտրութեան ժամանակ, կռիւ և «ղալմաղալ» պատահած են : Զոջերը շանացին խեղդել միջակ դասակարգին ձայները և մինչև իսկ կառավարութեան դիմեցին : Վերջապէս ընտրուեցան շոջերուն կուսակիցները :

— Ստացանք Նիւ-Եօրքի մէջ հրատարակուող «Հայրենիք» շաբաթաթերթի առաջին թիւը, որ մեր վրայ շատ լաւ տպաւորութիւն թողուց : Տարեկան գինն է տարր ֆրանք արտասահմանի համար : Հասցէն՝

The Hayrenik Pub. C.
628 Third ave.
New York City

—)(—

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վաղը, Վառնայի և Պուրկարիոյ բազմաթիւ ուրիշ քաղաքներու մէջ պիտի կատարուին քաղաքապետական ժողովներու ընտրութիւնները : Կը յուսանք թէ ընտրողական իրաւունք ունեցող հայերն ալ պիտի մասնակցին այս ընտրութեանց, և իրենց քուէները պիտի տան պարկեշտ գործունէութեամբ քաղաքացիներուն համարուած վայելող անհատներու : Ժամանակէ մը հետէ, քաղաքապետական ժողովներու անդամները կաշխատէին իրենց քսակները պարտաւարաններու, փոխանակ հսկելու քաղաքին գործերուն : Ընտրողները վերջ մը տալու են այսպիսի շահատակութեանց :

— «Նարսիսի Փրօվա» կը հաստատէ այն լուրը թէ Մ. Իվաչէֆ, կրթական նախարարը, հրատարած է նախարարութեանէն, վասն զի կըրցած չէ երեսփոխան ընտրուել :

— Պէլճիական ընկերութիւն մը բաւական ժամանակէ հետէ շաքարի գործարան մը հաստատած է Սօֆիայի մէջ, բայց մեծաքանակ ճակնգեղ գտնելու դժուարութիւն կը կրէ :

— Մ. Մ. Կրէքօֆ և Ռատուլաֆօֆ Պրէշնիք գաջին, բնորոշութեանց ժամանակ հոն պատահած շփոթութիւնները անձամբ քննելու համար :

— Շնորհիւ ազատ ընտրութեանց, ընկերվարականները որք ցարդ միայն մէկ աթոռ ունեցած էին Սօպրանիէին մէջ, կարող եղան վեց աթոռներ շահել : Վեց ընկերվարական անդամներն են Մ. Մ. Սաքըզօֆ, Պլակօէֆ, Պաքէֆ, Տունկօֆ, Կապրովօքի և Հաճիէֆ :

— «Թըրկօվսքի Վէսթնիք» նկարագրելէ յետոյ Վառնայի հայկական մեծ միթիւնը, կըսէ թէ միթիւնը կարող պիտի չըլլայ իր նպատակին հասնել, որովհետեւ Վեհաժողովը որոշած է այսպիսի գրութիւնները մերժել :

— Բոլոր մակթոնական կօմիտէներու պատուիրակներէն կազմուած ժողով մը կազմուած է Սօֆիայի մէջ, յիշատակագիր մը մատուցանելու համար Լահէյի Վեհաժողովին Մակթոնիոյ վիճակին մասին :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Փիլիպեան ՊԱՏԵՐԱԶՄԸ. — Զօրավար Օթիս կը հեռագրէ թէ արտօնութիւն տուած է Ակինալտօի պատուիրակները զրկել Մանիլա ամերիկեան պատուիրակներուն հետ բանակցելու համար խաղաղութեան պայմաններուն վրայ :

— Ապստամբները տեղ տեղ կը

պատերազմին նաեւ սպանիացուց հետ, որոնցմէ կը շանան զէնք և ռազմավթերք խլել :

— Փիլիպեան համաժողովը, որ մօտերս պիտի գումարուի պատերազմին վրայ խորհելու համար, 56 պատուիրակներէ կը բաղկանայ, որոնց մեծագոյն մասը Ակինալտօյի շերտ հետեւողներն են : ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎ. — Կարտինալ Բամբոլայի հրամանով, Պապին Լահէյի ներկայացուցիչը թողուց իր պաշտօնատեղին և մեկնեցաւ : Այրած սըրտին չոր միթիւրանք... :

— «Պէլլինէր Թակալթ» գերման բրօֆէսօրներուն կարծիքը հարցուցած է այս ժողովին մասին, և ամէնէն ալ յուսահատական պատասխան ստացած է :

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — Պրանսիայ Սնրսէյ, «Թան» նշանաւոր քրոնիկատը, մեռաւ թոքատապէ 70 տարեկան :

— Եէմէնի ապստամբութիւնը շատ յաջողութեամբ յառաջ կերթայ : Ապստամբ փաշա սալպուած է իր զօրքերով ետ քաշուել Սանա : Ուտելիքի պակասութիւնը, հիւանդութիւնները, զօրքերու դասալքութիւնը և Արապներու գիշերային սոսկալի յարձակումները շատ կորուստներ պատճառած են թուրք զօրքերուն : Ամբողջ բանակը 2000 հոգինոց խուճիկ մը վերածուած է, որ ապստամբներուն սուրճի արտերը կաւրչուցէ, փոխանակ պատերազմելու :

— Իտալիոյ նախարարութիւնը կազմուեցաւ : Սօնինոյի, Ռուտինիի և Գրիսփիի կուսակիցները ուժ պիտի տան անոր, մինչդեռ ձիօլէթի և Ծանարտէլի հակառակ են : Նախարարութեան կեանքը ազատականներուն ձեռքն է :

— Պէլլիքայի ընկերվարականները և արմատականները կարեւոր համաձայնութիւն մը գոյացուցին քաղաքային ընտրութեանց առթիւ :

— Միլան թագաւոր պիտի մեկնի Սերպիայէն, և այն ատեն Մ. Եատովսքի Պէլլիքատի ռուս դեսպանը պիտի գայ իր պաշտօնատեղին :

— Մը. Պրօտրիք յայտարարեց անգլիական խորհրդարանին մէջ թէ կառավարութիւնը որեւիցէ տեղեկութիւն չունի հայ եպիսկոպոսի մը և արքեպիսկոպոսի մը Երուսաղէմի Մը. Յակոբայ վանքին մէջ բանտարկութեան մասին :

— Հապէշտանի Մէնէլիք թագաւորը մեծ սպառնալից ընդունած է Մառշան հրամանատարը :

— Պրանսական կառավարութիւնը յայտնած է թէ տահնութեամբ պիտի չը գիտէ Սան Մունի ծոցին գրաւումը իտալացուց կողմէ :

—)(—

ԿԸ ՓԵՏՈՒՈՒԻ

Երկրայի Միջին գիւղէն Սրապ Մանուկ Քիւլիանճեան, 29 տարեկան, մեծ ու սեւ աչքերով, սև պիտերով, երկար հասակով երիտասարդը, որ պանքայի ցոյցէն յետոյ Պուրկարիա անցնելով անյայտ եղած է : Տեղեկութիւն ունեցողներէն կը խնդրուի գրել խմբագրութեան :

ԱԶԴ

Յառաջիկայ սեպտեմբերին պիտի բացուի Վառնայի մէջ Ա. Ամիրխանեանցի անօրինութեամբ օրիորդաց Հայկական դպրոցը, ուր Օր. Լ. Ամիրխանեանց գլխաւոր վարժուհի դերը պիտի կատարէ :

Ուսանելու սովորական առարկաներէն զտն, և բացի Հայերէն ու Պուրկարեան լեզուներէն, որք պարտաւոր չպիտի ըլլան, կան նաեւ Պրանսերէն, Գերմաներէն և Անգլիերէն լեզուները :

Գինեքը՝ ամսական 10, 6 և 3 լիվ : Դաշնակ — ամսական 15 լիվ 8 դասի համար : Տնօրէն Ար. Ամիրխանեանց

ԿՈՒՋԻՔ ՀԵՐՍՏԱՆԱԼ

Գիմեցէ՛ք Մ. Թիւթիւնճեան և Բնկ. Ի Ռուսոյի Ռուսոյի Ռուսոյի կը վաճառեն, Սօֆիա քաղաքի Պուրկարական կառավարութեան կողմէ վաւերացած վիճակահանութեան Բ. շրջանի ստասակները : Օտար երկիրներէ յանձնարարութիւններ ևս կընդունուին :

ԱԶԴ

Հայ հասուն երիտասարդ մը որ գիտէ հաշուապահութիւն, ծանօթ է սաճկերէն և գաղղիերէն գրականութեան, կուզէ պաշտօն ստանձնել վաճառատան մը մէջ զիւրամտցելի վարձատրութեամբ, կը համաձայնի նաեւ պարզ գործակատար ըլլալ : Դիմել խմբագրութեան :

ՊՕՐՍԱ

Վառնա 8 Մայիս

ՊՈՒՂՏԱՅ
Վալօն, լիպրա 55—58, հէքթօլ : 8.80—9.20 ֆրանք
Արապ, լիպրա 55—60 հէքթօլ : 9—10 ֆրանք

ԱՐՔԱ
Լիպրա 42—50 հէքթօլ : 6—6.20 ֆրանք

ԲՐՍԻՐ
Վալօն, 55—57 լիպրա, 5.75—5.80
Առապ, 55—60 լիպրա, 6—6.10
Կիւնտէ 15—20 վալօն, 25—30 առապ
Կէլմէքտէ տիր :

ՏԱՐԸ
Կիւնտէ 1—2 արապ կէլմէքտէ տիր : 58—60 լիպրա, 5.50—5.75 ֆրանք
Առապ մուսուլմանի նաբօլէտն 21 ֆրանք հիւսպը իլէ տիր :

Отговорникъ : А. СУКЯСОВЪ

Печатница „Взаимность“ Варна